MY FOREST
ARMENIA

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ
2024

myforestarmenia.org

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3 ՀԻՄՆԱԴՐԻ ՈՒՂԵՐՁԸ
5 ԱՆՏԱՌԻՆ ՆՎԻՐՎԱԾ 5 ՏԱՐԻ
6 ԻՆՉՈՒ Է ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՀՐԱՏԱՊ
7 ՄԵՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
9 ՏՆԿԻՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄ
10 ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ
12 2024թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
14 ԱՎԱՐՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
16 ԱՎՍՏՐԱԼԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՏԱՌ
17 ՄԵԾԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՍԻՆ
18 ԱՆՏԱՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ
19 «ԱՆՏԱՌԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ» ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ՀԱՄԵՐԳ
20 ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ
22 ՄԵՐ ՄԱՐԴԻԿ
24 ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ
25 ՖԻՆԱՆՍՆԵՐ
26 ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ

ՀԻՄՆԱԴՐԻ ՈՒՂԵՐՁԸ

2024 թվականը մեր կազմակերպության համար առանցքային տարի էր: Մենք նշեցինք մեր հիմնադրման 5-րդ ամյակը. սա հնարավորություն էր հետադարձ հայացք գցելու, գնահատելու մեր ձեռքբերումներն ու դժվարությունները, մեր թիմի անդամների նվիրվածությունը, տեղական համայնքների ներգրավվածությունը և մեր դոնորների անգնահատելի աջակցությունը:

Այս տարին նաև բարդ էր մեզ համար, քանի որ կորցրեցինք խոշոր դոնորի, ով իր հերթին ֆինանսական կորուստներ էր կրել: Սա մեզ համար դարձավ թե՛ մարտահրավեր, և թե՛ հնարավորություն: Կենտրոնացանք մեր կազմակերպման վրա՝ ծախսերը հնարավորինս նվազեցնելու, բայց նաև՝ նոր ֆինանսական աղբյուրներ գտնելու համար: Նոր մարդիկ ու կազմակերպություններ արձագանքեցին մեր կոչին, այդ թվում՝ ավստրալահայ համայնքը, Ազնավուր հիմնադրամը, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամը, Ջոն և Հասմիկ Մկրտչյաններ հիմնադրամը և այլոք: 2024-ին մենք տնկեցինք մեր երկումիլիոներորդ ծառը, և զգում ենք մեզ ուժեղ ու վճռական՝ շարունակելու մեր աշխատանքը:

Թեև թվերն ընդգծում են մեր ձեռքբերումները, իմ ամենամեծ հույսն այն է, որ բոլորը լիովին հասկանան անտառների կենսական նշանակությունը մեր մոլորակի մեր մոլորակի ու մեր իսկ բարեկեցության համար: Մեր էկոհամակարգերի առողջությունն ու մեր սեփական գոյությունը խորապես փոխկապակցված են մեր անտառների վիճակի հետ: Ավելի քան երբևէ, մենք հիմա պետք է ամեն ինչ անենք, քանի դեռ դեռ կարող ենք, որովհետև կլիմայական փոփոխություններն անխուսափելիորեն նվազեցնելու են անտառապատման հնարավորությունները: Հույս ունեմ, որ այս գիտակցումը կնպաստի ինչպես անհատական, այնպես էլ խմբային գործողություններին՝ էկոլոգիական վերականգնումը առաջնահերթություն դարձնելու համար:

Ձեր առատաձեռնությունը սնում է մեր անտառապատման ջանքերը՝ օգնելով մեզ ստեղծել ուժեղ անտառներ և աջակցել Լոռու և Տավուշի մարզերի հեռավոր համայնքների մարդկանց: Նայելով առաջ՝ 2025 թվականը պայծառ է, քանի որ պլանավորում ենք տնկել մոտ 600,000 ծառ Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում: Հաջորդ տարվա մեր ծրագրերում շատ հետաքրքիր նախագծեր են, և մենք մնում ենք նույնքան նվիրված, որքան երբևէ:

Անտրէ Գումուշճեան

ՄԵՐ ԹԻՄԸ

Անտրէ Գումուշճեան
Հիմնադիր և գլխավոր տնօրեն

Լիլիթ Մարտիրոսյան
Փոխտնօրեն

Վահե Մարտիրոսյան
Գործառնական ղեկավար

Տարոն Ալեքսանյան
Գիտական մասի պատասխանատու
և ԱՏՀ փորձագետ

Լևոն Մխիթարյան
Տնկարանի ղեկավար

Մերի Հարությունյան
Կայքի և բովանդակության
համակարգող

Արփինե Ալեքսանյան
Միջոցառումների համակարգող

Հեղինե Արմենյան
Բարերարների հետ կապերի
ղեկավար

Ալինա Կարապետյան
Կորպորատիվ կապերի ղեկավար

Դիանա Կիրակոսյան
Գլխավոր հաշվապահ

Իռա Մանգասարյան
Ադմինիստրատիվ օգնական

Էդվարդ Եդարյան
Դաշտային աշխատանքների
համակարգող

Տարոն Ղազարյան
Դաշտային աշխատանքների
համակարգող

Գեղամ Հակոբյան
Տնկարանի համակարգող

Սարգիս Պետրոսյան
Շինարարության պատասխանատու

ԱՆՏԱՌԻՆ **ՆՎԻՐՎԱԾ 5 ՏԱՐԻ**

2024

- ԵՐԿՈՒՄԻԼԻՈՆԵՐՈՐԴ ԾԱՌԻ ՏՆԿՈՒՄԸ
- «ԲՈԴՈՒԻՆ ԹԱԳԱՎՈՐԻ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՄԻԱՆԱԼԸ

2023

- 500 ՀԵԿՏԱՐ ՆՈՐ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ
- ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ 500Մ^2 ՋԵՐՄԱՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ
- «ՄԵԾԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՍԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ

2022

- ՄԻԼԻՈՆԵՐՈՐԴ ԾԱՌԻ ՏՆԿՈՒՄԸ
- ԱՌԱՋԻՆ ՓԱԿ ԱՐՄԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՏՆԿԻՆԵՐԸ
- «ԻՄ ԱՆՏԱՌ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՍՏԵՂԾՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԴԱՇԻՆՔԻ ՀԱՄԱՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

2021

- «ԴՈԿՏՈՐ ԳԱՐԻ և ԼԻՆԴԱ ԱՍՍԱՐԵԱՆՆԵՐ» 300Մ^2 ՋԵՐՄԱՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ
- ԱՌԱՋԻՆ 100+ ՀԱ ՏԱՐԱԾՔԻ ՏՆԿՈՒՄԸ
- «ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻ ԱՆՏԱՌ» ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ

2020

- ԱՌԱՋԻՆ ԾԱՌԵՐԻ ՏՆԿՈՒՄԸ ՇԻՐԱԿԱՄՈՒՏՈՒՄ
- ԳՈՒԳԱՐՔԻ ՏՆԿԱՐԱՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

2019

- ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ
- «ՊԵՆԺԱՄԻՆ ԳՈՒՄՈՒԾՃԵԱՆ» ՏՆԿԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ
- ԴԵԲԵՏԻ ՏՆԿԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ
- ԱՌԱՋԻՆ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

ԻՆՉՈՒ՞ Է ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՀՐԱՏԱՊ

Աշխարհի մարդկանց ավելի քան 55%-ը և հայերի ավելի քան 64%-ն ապրում են քաղաքային բնակավայրերում: Մինչ անտառներին մոտ ապրող մարդիկ զգում են անտառների օգուտները շատ նյութական կերպով, քաղաքաբնակները հիմնականում չեն էլ պատկերացնում, որ իրենց առօրյա կյանքի վրա ազդում են իրենցից ինչ-որ տեղ հեռու գտնվող այս էկոհամակարգերը: Թվում է, թե սնունդը գալիս է սուպերմարկետից, իսկ ջուրը՝ ծորակից:

Դժվար է պատկերացնել, որ աշխարհում խմելու ջրի 75%-ը գալիս է անտառներից, իսկ հողի որակը, և ըստ այդմ՝ բերքատվությունը կախված է անտառներից:

Կլիմայական փոփոխությունները տեղի են ունենում հենց մեր աչքի առաջ, և նայելով այն երկրներին, որոնք արդեն տուժում են կլիմայական աղետներից, տեսանելի է, որ անգործությունը դեպի Հայաստանի անապատացում տանող ճանապարհն է: Անտառածածկույթի ընդամենը 10%-ով Հայաստանը համարվում է կլիմայական փոփոխությունների հանդեպ ամենախոցելի երկրներից մեկը:

Նոր անտառներ տնկելով և եղածները պահպանելով՝ մենք հիմքեր ենք ստեղծում ավելի դիմակայուն ապագայի համար: Անտառները կլինեն քաղցրահամ ջրային ռեսուրսների երաշխիքը, կկանխեն հողերի էրոզիան, կնվազեցնեն ջերմաստիճանը և կբարձրացնեն խոնավությունը, կպաշտպանեն գյուղատնտեսական բերքը, ընդհանուր առմամբ կապահովեն կյանքի որակն ու կստեղծեն ուժեղ համայնքներ:

Խնդրի մասշտաբը մեծ է, չափազանց մեծ մեզ՝ մարդկանց համար: Ահա թե ինչու մեզ անհրաժեշտ է բոլորի ներգրավվածությունը իրական ձեռքբերումների հույս ունենալու համար:

ՄԵՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



Համայնքների մեր գործի «սիրտն են»: Մինչ մեր գործողություններն ուղղակիորեն ազդում են գյուղերի սոցիալ-տնտեսական կյանքի վրա, համայնքները կարևոր դեր են խաղում հողերի ընտրության, տնկման և հետագայում երիտասարդ անտառների պաշտպանության գործում: Մեր անտառպատման տարածքները գտնվում են Լոռու մարզի հետևյալ համայնքներում՝ Փամբակ, Ստեփանավան և Սպիտակ, ինչպես նաև Տավուշի մարզում գտնվող «Դիլիջան» ազգային պարկում: Մեր «Պենժամին Գումուշճեան» տնկարանը գտնվում է Վանաձոր համայնքում, իսկ Դեբետ տնկարանը՝ «Հայաստանի մանուկներ» («ՔՈԱՖ») բարեգործական հիմնադրամի սմարթ կենտրոնի տարածքում:

2024-ի ԱՄՓՈՓՈՒՄ

61,486
ԾԱՌԻ ՇՈՒՐՋ ՔԱՂՀԱՆ

120
ՏՆԿՈՂ ԱՇԽԱՏԱԿԻԾ

75 ՀԱ
ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ՏԱՐԱԾՔ

339,650
ԾԱՌԻ ՏՈՒՆԿ

375
ԿԱՄԱՎՈՐ

ՏՆԿԻՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄ

2024 թվականի ընթացքում Գուգարքի և Դեբետի մեր տնկարաններում աճեցրել ենք ավելի քան 15 տեսակի ծառերի և թփերի 1,035,600 տնկի: Բացի այդ, ջերմատանը փակ արմատային համակարգով աճեցրել ենք կեչու 130,000 տնկի, որոնցից մոտ 90,000-ը հարմար էին տնկման համար: Մնացածը կաճեցվի ևս մեկ տարի և կտնկվի 2025 թվականին:

Տարին հատկապես աչքի ընկավ եղանակային անբարենպաստպայմաններով՝ կարկուտով և հաճախակի տեղատարափ անձրևներով: Հողային պատնեշների կառուցումը շարունակվեց է տնկարաններում. դրանք կարևոր դեր են խաղում հողի բերրի շերտի էրոզիայի կանխարգելման գործում:

«Դասավանդի՛ր, Հայաստանի» հետ համատեղ ունեցանք դպրոցականների կրթական այցերի մեր առաջին փորձը:

Տարեվերջին տնկարանի աշխատակիցները հավաքեցին տարբեր ծառատեսակների սերմեր: Դրանք ցանեցինք աշնանը, և 2025 թվականին Գուգարքի տնկարանում ակնկալում ենք ունենալ մոտ 700,000 տնկի, իսկ Դեբետում՝ 300,000 տնկի:

Մեր տնկարաններն աշխատանք են տալիս 26 հոգու, ովքեր դրանց հարակից 4 գյուղերից և Վանաձորից են:

ծառաստաններ



Թխկի սրատերև
5,000

Տանձենի կովկասյան
47,600

Սոճի սովորական
106,224

Թխկի բարձրլեռնային
2,700



Խնձորենի արևելյան
22,200



Կեչի լիտվինովի
90,150

Թխկի դաշտային
750



Թեղի մանրատերև
7,400

Կաղնի խոշորառէջ
57,626

ՓՈՔՐԻԿ ԿԱՂԻՆՆԵՐԻՑ ԱՃՈՒՄ ԵՆ ՀԶՈՐ ԿԱՂՆԻՆԵՐ

Այսպիսով, մենք պետք է նախ հավաքենք սերմերը՝ ծառերն աճեցնելու և անտառներ ստեղծելու համար: Մենք տնկում ենք միայն տեղական ծառերի և թփերի տեսակներ, սա շատ կարևոր է կենսաբազմազանությունը պահպանելու և այնպիսի անտառներ աճեցնելու համար, որոնք որքան հնարավոր է մոտ են բնականին: Սեպտեմբեր և հոկտեմբերի ամիսներին մեր դաշտային աշխատանքների համակարգողներն անտառներում փնտրում են այնպիսի վայրեր, որտեղ կարելի է հավաքել մեծ քանակի սերմեր, ապա տնկարանի աշխատողների թիմն ու գյուղացիները գնում են ընտրված վայրերը և հավաքում սոճիների, կեչիների, հաճարենիների, կաղնիների և բոլոր այն տեսակների սերմերը, որոնք մենք աճեցնում ենք: Երբ սերմերը հասնում են տնկարան, սկսվում է հսկայական և մանրակրկիտ աշխատանք՝ տեսակավորում և մաքրում, ապա սերմերի ցանքսը կամ չորացումը պահպանման համար, քանի որ մի մասը ցանվելու է գարնանը:

Ամեն տարի չէ, որ լավ է տարբեր ծառատեսակների համար: Հատկապես կաղնիներն առատ բերք են տալիս երեք տարին մեկ, և 2024 թվականը շատ հարուստ տարի էր: Մենք հավաքեցինք 3,600կգ կաղին՝ 2023-ի 230կգ-ի դիմաց: Մոտ 300 կամավոր միացավ մեզ՝ հավաքելու կաղնու սերմեր: Սա հաճելի և ոգևորող գործողություն է, որն օգնում է հասկանալ բնության կենսաշրջանը և լինել դրա մասը:

2024թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԼԵՌՆԱՋՈՒՐ-V

Մակերես՝ 115 հա

Բարձրություն՝ 1900 – 2350 մ

Կարգավիճակ՝ ընթացքի մեջ է, տնկվել է 75 հա

Լեռնաջուր V-ում 2024 թվականի աշնանը տնկեցինք 225,076 ծառ՝ ծածկելով 75 հա: Ավելի քան 90,000 փակ արմատային համակարգով կեչիներ՝ աճեցված թաղարներում, գբաղեցրին գլխավոր տեղը:

Չնայած Լեռնաջուր V-ում նոր անտառտնկման տարածքը պահանջում էր լրացուցիչ լոգիստիկա, ներառյալ 4x4 բեռնատարներ աշխատողներին տեղափոխելու համար՝ տնկման գործընթացը ընթացավ անխափան: Մեր թիմը հարմարվեց տեղանքին՝ ապահովելով, որ յուրաքանչյուր տնկի և կաղնու սերմ դրվի ճիշտ տեղում՝ աճի պոտենցիալը հնարավորինս մեծացնելու համար:

ՋՐԱՇԵՆ-Ի

Մակերես՝ 110 հա

Բարձրություն՝ 1860 – 2290 մ

Կարգավիճակ՝ տնկվել է 110 հա

Ջրաշեն Ի-ում առաջին անգամ տնկել ենք 2021 թվականի գարնանը և աշնանը:

Ջրաշեն Ի-ը մեր առաջին մեծածավալ անտառտնկման տարածքն է: Այստեղ մենք ընդհանուր թվով տնկել էինք 359,982 ծառ ու թուփ: 2022-ի մոնիտորինգի արդյունքները ցույց տվեցին, որ թեև հյուսիսային և հյուսիս-արևմտյան լանջերին ծառերը հիմնականում լավ էին աճում՝ 60-70% կպչողականությամբ, հարավային լանջերին կպչողականության մակարդակը շատ ավելի ցածր էր:

2024 թվականի գարնանը մենք վերատնկեցինք տեղանքը ավելի քան 102,000 ծառերով՝ կենտրոնանալով այն տարածքների վրա, որտեղ լավագույն պոտենցիալն էր երևում: Վերատնկման այս գործողության հիմնական նպատակը լրացումներ անելն էր, ինչպես միշտ՝ մեր նպատակը ծառատունկը չէ, այլ անտառ ստեղծելը:

ԱՎԱՐՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մակերես՝ 198 հա
Բարձրություն՝ 1950 – 2350 մ
Կարգավիճակ՝ տնկված 145 հա

ԼԵՌՆԱՋՈՒՐ I ԵՎ II

2024թ. աշնանն այստեղ ընդհանուր թվով 463,160 ծառ ենք տնկել, այդ թվում՝ 80,000-ից ավելի կեչի, բնական կեչուտին կից տարածքում: Լեռնաջուրը հիանալի տարածք է՝ խոնավ, հարուստ հողով և առատ տեղումներով: Միևնույն ժամանակ խոտն աճում է մինչև 1.5 - 2 մետր: Սա նշանակում է, որ խնամքը, հատկապես քաղհանը, շատ կարևոր է, որպեսզի երիտասարդ տնկիները ստանան բավարար արևի լույս:

2024թ. սեպտեմբերին մոնիտորինգը ցույց տվեց գերազանց արդյունքներ. ծառերի 90%-ը լավ վիճակում էր և դիմակայել էր ամառվա տապին: Այս արդյունքը խրախուսող է:

ԼԵՌՆԱՋՈՒՐ-III

Այս փոքր տարածքում ծառատունկն արել ենք 2024 թվականի գարնանը հատուկ՝ Լեռնաջուր համայնքի մեղվապահներին օգնելու համար, ովքեր մեղվափեթակները պահում են մոտակայքում: Տնկել ենք հատկապես լորենիներ, որոնք շատ օգտակար են մեղրի արտադրության համար:

Մակերես՝ 6 հա
Բարձրություն՝ 1700 մ
Կարգավիճակ՝ տնկված 6 հա

Մակերես՝ 360 հա
Բարձրություն՝ 1725 – 2300 մ
Կարգավիճակ՝ տնկված 233 հա

ՈՒՐԱՍԱՐ

2022թ. աշնանն ու 2023թ. գարնանը 409,264 ծառ ենք տնկել այս տարածքում: Այն հիմնականում հյուսիսահայաց դիրք ունի, և հողի որակը գերազանց է: Սա մեզ թույլ տվեց տնկել 13 տեսակի ծառեր և մի քանի տեսակի թփեր: Տեղական համայնքներից 240 հոգի միացան մեր թիմին՝ իրականացնելու այս հսկայական աշխատանքը:

Առաջին մոնիտորինգի արդյունքները շատ դրական էին. մենք գրանցեցինք ավելի քան 80% կպչողականության ցուցանիշ 2023 թվականին: 2024 թվականի մոնիտորինգի այցերի ընթացքում մենք արձանագրեցինք, որ ծառերը տեսանելիորեն մեծացել են՝ զարգանալով մի միջավայրում, որը շատ բարենպաստ է նոր անտառի սկզբնավորման համար:

Մակերես՝ 105 հա
Բարձրություն 2150 – 2400մ
Կարգավիճակ՝ տնկված 105 հա

ՋՐԱՇԵՆ-II

Ջրաշեն II-ն ունի մեծ առավելություն՝ հիմնականում հյուսիսահայաց է: Կեչու և կաղամախու բնական անտառներով ձորակների առկայությունը նույնպես լավ նշան է: 2022թ. աշնանն այս տարածքում տնկել ենք 392,710 ծառ: 2023 թվականի մոնիտորինգը ցույց տվեց 81% կպչողականության ցուցանիշ, որը նվազեց մինչև 70% երկրորդ ամռանից հետո: Տնկիները հիմնականում լավ էին աճում՝ բացառությամբ բարձրադիր վայրերում տնկված սոճիների մի մասի: Նաև մինչ ձորակներում տնկված ծառերը զարգանում էին շատ լավ, գոգավորություններում տնկվածներն ավելի դանդաղ էին աճում ուժեղ քամիների պատճառով: Չնայած որոշ տարածքներում դանդաղ, բայց ամենակարևորն այն է, որ տնկիներն աճում են կայուն կերպով:

ԴԻԼԻՋԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ

Այս տարածքը շատ էր տուժել 90-ականների սկզբի էներգետիկ ճգնաժամի ժամանակ, երբ բարձր մարդածին ճնշումն անտառի շատ տարածքներ վերածեց նոսրանտառի: Անտառվերականգնման աշխատանքները ներառում էին տարածքի ցանկապատում, էնդեմիկ սերմերի ցանքս և ծառատունկ: Սերմերը ու ծառերը ներկայացնում են ազգային պարկի կենսաբազմազանության հիմնական տեսակները:

Մակերես՝ 20 հա
Բարձրություն՝ 1650 մ
Կարգավիճակ՝ տնկված 20 հա

Մակերես՝ 86 հա
Բարձրություն՝ 1750–1900 մ
Կարգավիճակ՝ տնկված 30 հա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ

2020թ. աշնանն ու 2021թ. գարնանն այս տարածքում 104,872 ծառ տնկեցինք: 2021 թվականի ամռան սաստիկ երաշտից հետո մենք տեղադրեցինք երկու հզոր պոմպեր և մոտ 3000 մետր խողովակ՝ մոտակա ջրանցքից տնկիների ոռոգումը կազմակերպելու համար: Ավելին, 2022 թվականի ապրիլին բոլոր ընկած տնկիները փոխարինեցինք սոճիներով: Երկու տարի այս եղանակով ջրելուց հետո եկանք այն եզրակացության, որ նույնիսկ 8 հոգու շուրջօրյա աշխատանքի պարագայում արդյունքները գոհացուցիչ չեն:

2023 թվականին մենք առանձնացրինք 2 հա փորձարարական տարածք՝ մի քանի նոր մեթոդով. դրանցից հիմնականը եղավ կաթիլային ոռոգման համակարգը: Լրացուցիչ դրամական միջոցներով մենք այս մեթոդը ընդլայնելու ենք ավելի մեծ տարածքների վրա:

ԱՎՍՏՐԱԼԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՏԱՌ

Սիդնեյ-Գուգարք առաջին բարեգործական միջոցառումը տեղի ունեցավ հունիսի 16-ին: Այդ օրը ստացանք ավելի քան 27,000 ծառի համար նվիրատվության խոստում՝ ավստրալա-հայկական անտառ ստեղծելու նպատակով: Ավելի մեծ թվով բարերարների առատաձեռն աջակցությամբ հետագա շաբաթների ընթացքում հասանք 30,000 ծառի, որոնք այժմ տնկված են Լեռնաջուրի անտառատնկման 10 հա տարածքում:

Ավստրալիայում և Հայաստանում միաժամանակ տեղի ունեցած միջոցառումը խթանեց կապերը երկու երկրներում ապրող ավստրալահայերի միջև: Միջոցառման կարևոր պահերից էին բնապահպան Ջոն Դիի ելույթը, երեխաների կողմից սերմերի ցանքսը Գուգարքի տնկարանում և անտառվերականգնման կարևորության մասին ուղերձը:

Մենք ուրախ ենք տեսնել, որ այլ երկրներում ապրող հայ համայնքներ արդեն փորձում են մարտահրավեր նետել ավստրալահայերի սահմանած նշաձողին:

ՄԵԾԱՆՈՒՄ ԵՆՔ **ՄԻԱՍԻՆ**

«Մեծանում ենք միասին» հատուկ ֆոտոշրջանակը, որը տեղադրվել է Ջրաշեն Ի-ի անտառտնկման տարածքում, հյուրընկալում է այն երեխաներին, որոնց ծնողները որոշել են ամեն ամիս ծառեր նվիրել իրենց անունով:

Ինչպես ծառերը արմատներ կգցեն և կբարգավաճեն, այնպես էլ երեխաները կմեծանան, իսկ նրանց համատեղ լուսանկարները ցույց կտան այս ճանապարհը. Ջրաշենում վերջերս տնկված ծառերը հիմա այնքան փոքր են, որ հազիվ թե գերազանցում են շրջապատող խոտին: Մի օր դրանք կաճեն և կանցնեն երեխաներից:

Այս ծառերը կապրեն դարեր շարունակ և կլինեն երեխաների հանդեպ ցուցաբերած սիրո և հոգատարության կենդանի վկայություններ: Մի օր այս երեխաները իրենց սեփական պատմությունները կպատմեն անտառի մասին, որը մեծացել է իրենց հետ միասին:

ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻ ԱՆՏԱՌ

Պատկերացրեք մի ապագա, որտեղ Շիրակամուտի լանդշաֆտը ծառերի պայծառ գոբելեն է, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է սիրո և միասնության յուրահատուկ մի պատմություն: Սա այն վայրն է, որտեղ գտնվում է Նորապսակների անտառը:

Հայկական ավանդույթի համաձայն՝ նորապսակներն իրենց հյուրերին հարսանեկան տարոսիկներ են մատուցում: Մի քանի տարի է, ինչ երիտասարդ զույգերի շրջանում ոգեշնչող միտում է՝ նվիրել ծառեր որպես հարսանեկան տարոսիկներ: Այսպիսով նրանք ընտրում են թողնել տևական, իմաստալից ազդեցություն՝ ժամանակավոր ֆիզիկական իրեր նվիրելու փոխարեն: Այս ծառերը կմնան իրենց երեխաների ու թոռների համար՝ որպես իրենց ստեղծած սիրո կենդանի հուշարձան: Մենք ուրախ ենք և հպարտ, որ հնարավորություն ենք ընձեռում նոր ընտանիքներ ստեղծող այս զույգերին պահպանել ավանդույթը՝ միաժամանակ անելով ապագայի համար նշանակալից բան:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

2024 թվականի մարտի 21-ի՝ Անտառների միջազգային օրվա կապակցությամբ, «Իմ անտառը Հայաստանը» Երևանում նախաձեռնել էր երկու միջոցառում՝ համաժողով և պաստառների բացօթյա ցուցահանդես՝ ընդգծելու անտառների կարևորությունը բիզնեսի և շրջակա միջավայրի համար:

«Անտառների էկոհամակարգային ծառայությունները և դրանց ազդեցությունը ձեր բիզնեսի վրա» խորագրով համաժողովը տեղի ունեցավ Արմենիա Մարիոթ հյուրանոցում: Թեմաներն ընդգրկում էին անտառային էկոհամակարգերի դերը կայուն բիզնես գործունեությունում, ինչպես նաև բիզնեսի դերը շրջակա միջավայրի պահպանության գործում: Հիմնական ելույթների թվում էին մեր հիմնադիր Անտրէ Գումուշճեանի, «Բնության համաշխարհային հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Կարեն Մանվելյանի և «Լայֆ Տերրա» կազմակերպության (Իսպանիա) ծրագրերի ղեկավար Մարկոս Լոպես Էրսիլյայի ելույթները: Հաջորդիվ պանելային քննարկումը ներկայացրեց կայուն բիզնես պրակտիկաների ինտեգրման տարբեր ուղիները, մասնակցությամբ Իզի Փեյ, Դատաարտ, Վեգա և Այդի Բանկ կազմակերպությունների ներկայացուցիչների: Մարիոթ Արմենիան մեծահոգաբար տրամադրել էր դահլիճն այս միջոցառման համար:

Բացի դա, «Էյ-Թի-Փի»-ի և WWF Հայաստանի հետ համագործակցությամբ բացվեց «Մենք ենք մեր անտառները» խորագրով բացօթյա ցուցահանդեսը, որը համադրել էր AHA Collective-ը: Ցուցահանդեսին աջակցում էր նաև Շվեյցարական զարգացման և համագործակցության գրասենյակը (SDC):

Այս ցուցահանդեսը նպատակ ուներ բարձրացնել հանրության իրազեկվածությունը անտառների պահպանման վերաբերյալ և ցուցադրել հայ արվեստագետների կողմից ստեղծված պաստառները, որոնք ընդգծում էին մարդկանց և անտառների միջև կապը, անտառներին սպառնացող վտանգները և յուրաքանչյուրիս գործելու պարտականությունը: Բացման արարողությանը ներկա էին ՀՀ Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը և Վարչապետի ավագ խորհրդական Համբարձում Մաթևոսյանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա դեսպանությունների ղեկավարներ:

ԱՆՏԱՌԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

2024 թվականին լրացավ լեգենդար Շառլ Ազնավուրի 100-ամյակը: Այս առթիվ «Իմ անտառ Հայաստանը» նախաձեռնեց հիմնել անտառ հռչակավոր շանսոնյեի անունով, որը կհավերժացնի նրա ժառանգությունը՝ իր անմահ երգերի հետ միասին: Ազնավուր Հիմնադրամն աջակցեց մեր գաղափարին՝ նվիրաբերելով առաջին 14,000 ծառերը: Նոյեմբերի 18-ին, «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ Հայկ Մելիքյանի հատուկ դաշնամուրային համերգը՝ ԱրարատԲանկի գլխավոր հովանավորությամբ: Միջոցառմանը ներկայացվեց երկու համաշխարհային պրեմիերա՝ Էլեն Յոլչյանի «Անտառի առեղծվածը» և Հայկ Մելիքյանի «Ծառը», ինչպես նաև ժամանակակից կոմպոզիտորների բացառիկ ստեղծագործություններ:

Համերգի արդյունքում մենք հավաքեցինք գումար՝ ևս

8291 ծառի համար:

Դրամահավաքը կշարունակվի 2025 թվականին, քանի որ մենք ցանկանում ենք, որ բոլորը հնարավորություն ունենան մասնակցելու այս յուրահատուկ անտառի ստեղծմանը:

Այս միջոցառումն առաջինն էր «Երաժշտությունը հանուն անտառների» շարքում՝ ամենամյա երաժշտական միջոցառումների շարք, որի նպատակն է խթանել երաժշտության միջոցով անտառվերականգնումը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր թվով 375 հոգի տարբեր կազմակերպություններից՝ Արդշինբանկ, Սինոփսիս, Դատաարտ, Էնվիդիա, միացան մեզ՝ կաղին հավաքելու կամ ծառ տնկելու: Անկախ աշխատանքի տեսակից՝ այս ներգրավվածությունն օգնում է մարդկանց հասկանալ, թե որքան դժվար և ժամանակատար է ծառ աճեցնելը և էլ ավելի դժվար՝ անտառ ստեղծելը: Այն ընկերությունները, որոնք որոշում են թիմային կամավորության օրը նվիրել Հայաստանում անտառվերականգնմանն աջակցելուն, իրական ազդեցություն են թողնում: Նրանց նվիրվածությունը ոչ միայն օգնում է վերականգնել շրջակա միջավայրը, այլ նաև ամրապնդում է թիմային ոգին և մոլորակի նկատմամբ պատասխանատվության ընդհանուր զգացումը: Նրանք կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գործուն օրինակներ են:

375

ՄԱՍՆԱԿԻՑ

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ ՄԵՐ ՄԱՍԻՆ

«Մենք բարձր ենք գնահատում «Իմ անտառ Հայաստան» կազմակերպության քայլերը երկրի կանաչ ապագայի համար պայքարում և ուրախ ենք համատեղ երկարաժամկետ բնապահպանական ծրագիր իրականացնելու հնարավորության համար: Ընկերության պրոֆեսիոնալ, պատասխանատու և կառուցվածքային մոտեցման շնորհիվ մեր աշխատանքի արդյունքները տեսանելի են դառնում:
Համոզված ենք, որ մեր համագործակցությունը կշարունակվի նույն ջերմ և արդյունավետ միջավայրում՝ լի նոր հաջողություններով և ծրագրերով:»

Լուսինե Ներսիսյան
Վարչության անդամ, ռիսկերի կառավարման տնօրեն
«Արդշինբանկ» ՓԲԸ

«Հայաստանի համար՝ «Իմ անտառ Հայաստան»-ի հետ
Ճանապարհը, որն անցնում ենք, անհրաժեշտ է երկրի և սերունդների ապագայի համար: Մեր գործընկերության հիմքում կարևոր նպատակներ են. ամրապնդել «կանաչ մտածողության» շուրջ համախմբվելու գիտակցությունը, ընդլայնել անտառային ծածկույթը, կանխարգելել սողանքներն ու անապատացումը, նպաստել ջրային ռեսուրսների պահպանմանն ու համայնքներում բնակչության զբաղվածության ավելացմանը: Այս ամենը՝ նաև կամավորների ներգրավմամբ»:

Արմեն Ավետիսյան
Գլխավոր տնօրեն
«Վիվա Արմենիա» ՓԲԸ

Սոցիալական պատասխանատվությունը մեզ համար առանձնահատուկ է բնապահպանության ոլորտում՝ հատկապես անտառների հիմնման գործում, քանի որ այն միավորում է մշակութային ժառանգության պահպանումն ու բնապահպանական արժեքների ստեղծումը:
Մենք հետևողականորեն նպաստում ենք Հայաստանի անտառապատմանը՝ «Իմ անտառ Հայաստան»-ի հետ շարունակական համագործակցությամբ: Վստահ ենք, որ անտառներ հիմնելու նպատակային աշխատանքը կճյուղավորվի և կտարածի կանաչ ու մաքուր երկիր ունենալու տեսլականը:

Միեր Անանյան
Վարչության նախագահ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Իմ անտառ Հայաստանի հետ համագործակցությունը հիանալի հնարավորություն էր՝ նպաստելու անտառների վերականգնմանը և Հայաստանի համար ավելի կանաչ ապագայի կառուցմանը: Ծառատունկի ազդեցությունը տեսնելն ուժեղացրել է շրջակա միջավայրը պաշտպանելու մեր ջանքերը: Մենք հպարտ ենք աջակցելու այս նախաձեռնությանը և ակնկալում ենք շարունակել մեր համագործակցությունն ավելի կայուն վաղվա օրվա համար:

Արթուր Չոբանյան
Բիզնեսի զարգացման տնօրեն
ՎԵԳԱ

ՄԵՐ ՄԱՐԴԻԿ

Մեր աշխատանքը հնարավոր չէր լինի առանց հազարավոր նվիրյալ ձեռքերի, որոնք անխոնջ աշխատում են ամենադժվար պայմաններում անգամ՝ լինի քամի, թե արև: Նրանք համարձակորեն լեռներ են բարձրանում, մագլցում են զառիթափ լանջերով, դիմակայում են սառը քամիներին և կիզիչ արևին՝ ապահովելու, որ ձեր նվիրած ծառերը աճեցվեն, տնկվեն և խնամվեն: Նրանց անսասան նվիրվածությունը յուրաքանչյուր տնկի դարձնում է ավելի կանաչ ապագայի գրավական:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Չնայած շատերն անտառվերականգնումը պատկերացնում են որպես ուղղակի ծառատունկ, իրականում այն երկար գործընթաց է: Մենք պետք է պլանավորենք մեր աշխատանքը 1.5-ից 2 տարի առաջ: Պետք է ժամանակին ապահովենք հողերի առկայությունը, ներգրավենք համայնքներին և կազմակերպենք վարչական փաստաթղթավորումները:

Այսօրվա փոփոխվող և անհաստատ աշխարհում, որը լի է արտաքին անկայունությամբ, նախապես պլանավորելը և ժամանակին որոշումներ կայացնելը մեծ մարտահրավեր է, բայց հետագայում ամեն ինչ կախված է ճիշտ որոշումներից:

2024 թվականի դժվարություններից մեկը Լեռնաջուր-V տարածքի տնկման վայր հասանելիությունն ապահովելն էր: Ասֆալտե և նույնիսկ գրունտային ճանապարհներից հեռու գտնվող Լեռնաջուր V-ից բացվում են հիասքանչ տեսարաններ, և այն հիանալի վայր է անտառվերականգնման համար: Մեր աշխատողների անվտանգությունն ապահովելու համար, ովքեր տնկման սեզոնի ընթացքում ամեն օր գալիս էին այստեղ, մենք իրականացրեցինք ճանապարհի բարեկարգման աշխատանքներ: Սա տարածքը դարձրեց հասանելի, իսկ ուղին՝ անվտանգ մեծ բեռնատարների համար, բայց այն միևնույն է մնում է դժվարանցանելի: Մեր թիմը մեծ համարձակությամբ և վճռականությամբ ընդունեց մարտահրավերը, և ծառատունկն ընթացավ հարթ և կազմակերպված ձևով:

Տնկման սեզոնը կարճ է, ուստի մենք չենք կարող կորցնել մի պահ անգամ՝ տնկելու ավելի քան մեկ տարի աճեցված և այդ սեզոնի համար պատրաստված տնկիները: Երբ կանգնում ես այս զառիթափ լանջերին, որտեղ նույնիսկ ուղղակի քայլելը դժվար է, սկսում ես հասկանալ այն բոլոր տղամարդկանց ու կանանց նվիրվածությունը, ովքեր օրական մոտ 100 ծառ են տնկում:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

2024 թվականին մեր ընդհանուր եկամուտը կազմել է 213,4 միլիոն դրամ, իսկ ծախսերը կազմել են 210 միլիոն դրամ: 2024-ի սկզբին մեծ դոնորի կորստի պատճառով, որից սպասվող եկամուտը մեր բյուջեի մոտ կեսն էր, տարին հատկապես լի էր մարտահրավերներով: Բյուջեն հավասարակշռված պահելու համար ստիպված էինք կրճատել մեր վարչական և գործառնական ծախսերը ու նվազեցնել ծառատունկը: Միևնույն ժամանակ մենք գտանք աջակցության նոր աղբյուրներ. իրականում կրկնապատկեցինք մեր դոնորների թիվը: Այս ամենի շնորհիվ մեր ծախսերը նվազեցին 46%-ով, մինչդեռ եկամուտները նվազեցին 40%-ով:

ՀԱՆԳԱՆԱԿՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ



ԲՅՈՒՋԵԻ ԲԱՇԽՈՒՄ



ԴՈՆՈՐՆԵՐ

Մեր ձեռքբերումներից ոչ մեկը հնարավոր չէր լինի առանց մեր մեծահոգի դոնորների: Անկեղծ շնորհակալություն ենք հայտնում բոլորին, ովքեր աջակցել են մեր աշխատանքին: Այս ցանկում ներառված են բոլոր նրանք, ովքեր նվիրատվություն են կատարել 2024 թվականի ընթացքում: Մենք ամեն ինչ արել ենք, որպեսզի այն հնարավորինս ճշգրիտ լինի: Հայցում ենք ձեր ներողամտությունը ցանկացած անճշտության կամ բացթողման համար և խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ, եթե որևէ նման բան նկատեք:

$100,000+
Անտրէ Գումուշճեան

$20,000+
Արդշինբանկ
Ջոն և Հասմիկ Մկրտչյաններ հիմնադրամ
Հայկական բժշկական ասոցացիա
Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ
Ազնավուր հիմնադրամ
Անիտա Գումուշճեան
Հովան Սիմոնյան

$10,000+
Վիվա
Լիբեկո հիմանդրամ
ԱրարատԲանկ
ԱյԴի բանկ
Վեգա
Ադամ Կաբլանյան
Գրեյսոն հիմնադրամ
Գարի Ասարեան
Գումուշճեան ՍՊԸ
Հենրի Հակոբյան
Հովսեփ Տահտա
Ջոն Ստաֆորդ
Միշել Դավուդյան

$5,000+
Դատաարտ
Գո ֆորեսթ
Լայֆ Տերրա
Մարլին Դյուրինկքս
Էնվիդիա Հայաստան
Բանկ Դելեն

$1000
Սինոփսիս
Հայ մեծահասակաների ասոցացիա
Գարո Սիմոնյան
Գարբիս Սիմոնյան
Ալեքսանդր հիմնական դպրոց
Ստեփան և Հիլտա Գրգեաշարեան
Բարթըն Բրուքս
Մոնիկ Կրիկոր
Սերժ Գոբլե
Մենք բոլորի համար հիմնադրամ
Քրիստիան Վրոյր
Թոդ Զանատտա
ՍՄՀ Սոլյուշնս Երևան

$250+
Թուֆենկյան հիմադրամ
Էդվարդ Դեմիրճյան
Ռուփինա Սիմոնյան
Արա Աղաջանյան
Հայ Սուրբ Հարություն եկեղեցի
Քրիստինե և Ռաֆիկ Սարգսյաններ
Դոկտոր Արմեն և Աննա Բաբաջանյաններ
Ելենա Վարդազարյան
Հակոբ և Ջուլիետ Կայսերեաններ
Խաժակ և Թենի Քորթեաններ
Փոլ Քասաբյան
Ռեստ-Ուել
Ավո և Լաուրա Սողոմոնյաններ
Տիրան և Վիրջինիա Վահրատյաններ
Վահան Բաթմանյան
Սիլ ընդ Սաունդ արքիտեքտս
Ինդրա Աբաջյան
Տեր Գևորգյան-Մարկոսյան
Ապո Թաբերդեան
Արեն Սիմոնյան
Սուրբ Երրորդություն Հայաստանյայց Առաքելական եկեղեցի
Արսեն Սարգսյան
Հարութ Դարբինյան
Զարուհի Բադալյան
Ջոն և Անի Տեր-Թադեւոսեան
Միքայել Քոլոքոսեան
Նարեկ Դեմիրյան

2024թ. տնկել են անվանական անտառ

$250-

Արտաշես Փաշինյան
Ռազմիկ Ասատուր
Ռոստոմ Մանուկյան
Հ.Մ.Ը.Մ. Արարատ
Թանգի Դը Դեքեր
Աբգար Էրվան
Կառլա Հարությունյան
Սիլվիա Իսկենդերյան
Սարգիս Եդելյան
Քրիստոֆ Քրիստիան
Էրիկ և Անի Կարապետյաններ
Ավետիս և Հասմիկ Համբարձումյաններ
Գարի և Դալար Աղաբեկյաններ
Իշխան և Իշխանուհի Սիմոնյաններ
Արքեպիսկոպոս Հայկազուն Նաջարյան
Հրաչ Յակուբյան
Լալա Կարապետյան
Լիզա Տեր-Մինասյան
Նվարդ Եդելյան
Շանթ և Սոսի Թաթոսյան
Սոսե Դեմիրյան
Վիգեն Քալլօղլյան
Անտուան Ակիլյան
Գառնիկ և Սյուզան Մոմջյան
Միքայել և Լին Յոհանես
Ադանա Հարությունյան
Թամար Փափազյան
Քրիստիան CLD
Գրանտ Սերգոյան
Հերմինե Կատվալյան
Մանե Ավետիսյան
Միքայել Մահմուրյան
Արմինե Թորոսյան
Ակսել Մարթենս
Լիզա Տեր-Մինասյան
Լարիսա Հովհաննիսյան
Իզաբել Բիժվոե
Նարե Հակոբյան
Լուսին Խաչատուրյան
Սվետլանա Սարգսյան
Պերճ և Ալիս Մոմճեան
Թումանյան դպրոց
Պողոս Դեքրմենճյան
Հովիկ Եսայան
Մովսես Հրայր Տեր-Գևորգյան
Արամ Քայֆաջյան
Տաթևիկ Քոլոյան
Վասկո Բրուտյան
Աննա Մելքումյան
Ավետիք Հարությունյանց
Հասմիկ Սարգսյան
Մարի Դեմյուլենաեր
Էլյա Գրիգորյան
Աիդա Սարյան
Դիանա Մնացականյան
Նաիրա Գրիգորյան
Սահակ և Նորա Սևակյան
Սեպուհ և Շելլի Սիմոնյան
Ալեքսեյ Կարմանով
Մարիամ Նազարյան
Անուշ Ապրեսյան
Նաիրի Խաչատուրյան
Արա Մակարյան
Բենուա Մակ
Գայանե Ղարագյոզյան
Կարապետ Մոմճեան
Քրիստինա Ղազարյան
Լիլիթ Գևորգյան
Լուսինե Գևորգյան
Սևան Կոյումճեան
Վերոնիկա Աղինյան
Հայրապետ Հակոբյան
Օննիկ Բոհչաճեան
Սարո Եսայան
Հեղինե Արմենյան
Լիլիթ Սանթուրյան
Օվսաննա Մինասյան
Արամ Նահապետյան
Նաթան Իսահակյան
Աննա Աբրահամյան
Ավետիս Պողոսյան
Կարինե Կիրակոսյան
Քրիստինե Ասատրյան
Լիլիթ Մնացականյան
Անյուտա Առստամյան
Շուշան Զարիկյան
Աննա Վարդանյանց
Արփի Քալայճեան
Հովսեփ Կարոյան
Ջեմմա Թորգոմյան
Մանանա Խաչատրյան
Մարիամ Ներսեսյան
Մելանյա Կարապետյան
Ռաչո Մանուկյան
Սարգիս Հելվաճեան
Սաթենիկ Բարսեղյան
Վարդան Ֆրանգուլյան
Ժենյա Ղազարյան

Seed Sowers
monthly giving

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում մեր «Ապագայի սերմեր» ծրագրի բոլոր մասնակիցներին՝ մեր ամսական դոնորներին, ովքեր շարունակել են աջակցել կամ միացել են մեզ 2024 թվականի ընթացքում

Անտրէ Գումուշճեան
Թաթուլ Աջամյան
Սուրեն Սերոբյան
Լուսինե Մեսրոպյան
Մարլին Դյուրինկքս
Սերժ Արտունոֆ
Թոյլեր Ֆորեսթ
Քընթրաքթինգ
Նաիրա Վարդանյան
Ռեբեկա Օհանես
Շահէն Արապ Օղլեան
Արամ Իսկանդերյան
Անի Հարությունյան
Գևորգ Պողոսյան
Բեռնար Կարետ
Նունե Ազատյան
Ռոբերտ Լևոնյան
Վլադիմիր Սարկիսյան
Յանա Շախրամանյան
Հռիփսիմե Հարությունյան
Լուսե Շահնազարյան
Արեգա Շահնազարյան
Արթուր Փոքրիկյան
Մերի Հարությունյան
Սերգեյ Խառատյան
Արսեն Հակոբյան

«Իմ անտառ Հայաստան» բնապահպանական ՀԿ

Աբելյան 6/4, գրասենյակ 408
Երևան 0038, Հայաստան
+374 12 20 29 09
info@myforestarmenia.org
www.myforestarmenia.org

SCAN ME TO PLANT